

ցուծեամբն պիտի կազմակերպէ, 1903 թ ա-
մասը. հայկական ցուցահանդէս մը Պերլինի
մէջ, շատ գեղեցիկ գաղափար մը որուն կը
մաղթենք լիակատար յաջողութիւն. Ահա այդ
ծրագիրը, այնպէս ինչպէս մանրամասնուած է
ան շրջաբերականի մը մէջ զոր պ. Խալատ-
եանց զրկած է հայ մամուլին .

« Մեր ձեռնարկը ոեւ է քաղաքական գոյն
պիտի շունենայ. Մեր նպատակն է գերմանա-
կան հասարակութեան ծանօթացնել. Գերմա-
նիոյ մայրաքաղաքին մէջ, հայ ժողովուրդին
հին ու նոր քաղաքակրթութիւնը, անոր մտա-
ւորական ու նիւթական արտադրութեանց ընդ
հանուր պատկերը ներկայացնել. Կ'ուզենք
մղել գերմանացի գիտունները աւելի յաջո-
ղութեամբ ուսումնասիրելու Հայոց լեզուն ու
պատմութիւնը եւ մեզի աւելի յստակ գաղա-
փար մը տալու հայ ցեղին մասին. Եւր միակ
բաղձանքն է խաղաղական միջոցներով ծառա-
յութիւն մատուցանել մեր ժողովուրդին, ճշ-
մարտութիւնը ճանչցնելով Հայաստանի եւ
Հայոց նկատմամբ. Մեր ժողովուրդին աշխա-
տութեան պատուհները եւ անոր մտաւորական
գործունէութեան արդիւնքները՝ իր պատմու-
թեան սկիզբէն մինչեւ. մեր օրերը, պիտի նը-
պատեն գերմանական ու եւրոպական հասա-
րակութիւնը համոզելու թէ Հայերը խաղա-
ղասէր, զարգացեալ եւ քաղաքակրթական շատ
բարձր աստիճանի մը հասնելու կարող ցեղ
մըն են .

« Ահա այս ժրագրուած ցուցահանդէսին բա-
ժինները .

« Եւրփեր . — հանքային նիւթեր եւ մետաղ-
ներ . նափթ . բամպակ . բուրդ . մետաքս . գինի
եւ ուրիշ ըմպելիքներ . շոր պատուհներ . կաթ-
նեղէններ . ձուկեր .

« Արուեստներ եւ արհեստներ . — ասղնագոր-
ծութիւն . հիւսուածք (գորգ . եւ այլն) . ոս-
կերչութիւն .

« Հին ու նոր գեղարուեստ . — ճարտարապե-
տութիւն եւ քանդակագործութիւն . մոզաիք .
նկարչութիւն .

« Նեղարանութիւն — ժողովրդային կեանք,
գործունէութիւն . բնակարան . հագուստներ .
մտաւորական կեանք (գրոյցներ , հեքեաթներ ,
երգեր . եւ այլն .)


« Հնութիւններ . զրամներ . կնիքներ , եւ այլն .

« Գրականութիւն եւ պարբերական մամուլ .

« Թատրոն (ներկայացուցումներով) մտաղիբ ենք
հրաւիրել նշանաւոր գիտուններ եւ ուղե-
ւորներ՝ ցուցահանդէսի միջոցին Հայոց մասին
շարք մը բանախօսութիւններ ընելու ելերտր-
ական պատկերացուցութիւններով .

« Նուիրատութիւնները զրկելի՝
Deutsche Bank (Behrenstrasse), M. le Dr. P.
Rohrbaeh et M. le Dr. B. Khalatiantz. Նամակ
եւն զրկելի՝ MM. B. Khalatiantz et N. Finck ,
9/4 Kantstrasse,
BERLIN, (Allemagne)

Պարբերաբար մեր հաշիւները պիտի հրատա-
րակենք հայկական մամուլին մէջ . »



ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԷԱՆԻ ԿԵԱՆՔԻՆ ՈՒ ՓՈՐԾԸ

Մկրտիչ Պէշիկթաշլեանի անունը ծանօթ
եւ սիրելի է ամէն Հայու, բայց անոր կեանքը,
բացի քանի մը գծերէ, ցարդ բոլորովին անծա-
նօթ է մնացած բոլոր Հայոց . իր գործերն ալ
հասարակութեան շատ փոքր մէկ մասին ծա-
նօթ են այժմ, բաց ի իր մէկ քանի ազգային
երգերէն որոնք երգարաններու միջոցաւ միշտ
տարածուած կը մնան ժողովրդին բոլոր խա-
ւերուն մէջ . Պէշիկթաշլեանի գործերն ամփո-
փող հատորը շատոնց ի վեր սպասած է .

Կարեւոր պակաս մը լրացնելու նպատակով
է որ ձեռնարկեցինք ուրեմն հրատարակել Պէ-
շիկթաշլեանի կենսագրութիւնը որուն համար
հաւաքած ենք բազմաթիւ տեղեկութիւններ,
ինչպէս եւ իր քերթուածները . հառերն ու
թատերգութիւնները երկրորդ սպագրութեամբ
մը ի լոյս ընծայել .

Այս հրատարակութիւնը պիտի բաղկանայ ե-
րեք հատորէ . 1 . կ'նսագրութիւնը, 2 . քեր-
թուածներ ու ճառերն. 3 . թատերգութիւնները .
Քերթուածներու հատորին մէջ, գրաբար լեզ-
ուով գրուած բանաստեղծութեանց կից՝ պիտի
հրատարակենք նաեւ աշխարհարար թարգ-
մանութիւնը, մատչելի դարձնելու համար մեր
ժողովրդին Պէշիկթաշլեանի այդ էջերը, ո-
րոնք թերեւս իր գործին գեղեցկագոյններն են
եւ լեզուին պատճառով շատ քիչ ծանօթ են
հասարակութեան .

Բաժանորդագրութիւն բաղած ենք առաջին
երկու հատորներուն համար Նրկու հատորը մէ-
կէն ՆՐՆՔ Ֆրանք . Հրատարակութեանէն յետոյ,
երկու հատորը պիտի արժեն չորս Ֆրանք .

Թատերգութիւններուն հատորին համար,
յետոյ պիտի բանանք առանձին բաժանորդ-
ագրութիւն .